

նրանց հրապոյրն ու վեհութիւնը, և նրանք ցկեանս կը տիրապետեն սրտի վերայ: Վերջին տարիներս երևացին պաշտպանողական ընտիր հատուածների մի քանի փորձեր, բայց ցայսօր դեռ չկայ կրօնական դաստիարակութեան նպատակին պատշաճ կերպով յարմարեցրած գրական ընտիր հատուածք: Մինչդեռ անկախ կրօնական բովանդակութեամբ բազմաթիւ ստանաւորներից կարելի է ընտրել բաւականաչափ գունաւոր, պայծառ հատուածներ, որոնք նկարագրում են այս կամ այն զգացմունքը և միտքը, որ վերաբերում են կրօնական շրջանին կամ կրօնական այլ և այլ երևոյթներին:

Պէտք է յիշեցնել, որ ժամանակակից մարդկանց համար յայտնի վիպագիրների (բելլետրիստ) լուրաքանչիւր խօսքը սակով է գնահատում. յատկապէս գնահատելի է այն պատանի ուսանողի համար, որ հրապուրում է դեզարուեստական գրականութեամբ: Այդ բոլոր աշխատանքները կունենային առաջնակարգ նշանակութիւն և շատ կը հեշտացնէին կրօնօւսոյցի աշխատանքը:

Հրատարակելով Poccia-ի այս յօդուածը, մեր ցանկութիւնն է ցոյց տալ թէ կրօնի դասաւանդութիւնը որպիսի կարևոր հանգամանք է ստացել ռուս մարդու համար:

Յ. Ա. Ե.



Յոյն աբեւեյի Հին-եկեղեցական ասուածաբանական գիտութիւնը իւր ծաղկման օրշաճում (IV-V րդ.): Նրա գլխաւոր ուղղութիւնները եւ բնորոշ յատկութիւնները:

(Ճարուեստագիտութիւն)

Որոգինեցձք Գ-րդ դարի երկրորդ կեսին զարգանում է երկու ուղղութեամբ: Որոգինէսի աշակերտները Աղէքսանդրիայում շարունակեցին կատիլիզական դպրոցը այն ուղղութեամբ, որը հաստատուած էր այդ դպրոցի մէջ հէնց Որոգինէսի մեջոցով մինչև Գ-րդ դարի վերջը. Գիոնիսիոս, Թէոդոսոս և Պիեբիոս, որքան որ մեզ հասած տեղեկութիւնների հիման վերայ դատել կարելի է, ներկայացնում էին Որոգինէսի վարդապետութեան

ձախակողմեան ընթացքը նրա ընտրոշ առանձնայատկութեամբ—
աստուածային անձնաւորութիւնների փոխադարձ յարաբերու-
թեան մէջ անպայման հնազանդութեամբ, թէև զօրեղ կերպով
հակուած էին աստուածաբանական գիտութեան հեռանքները
եկեղեցական վարդապետութեանը համաձայնացնելուն: Պաղես-
տինի Կեսարիայում Որոգինիզմի այս ձևը իրեն լուրջ հեռանդ
ունեցաւ Պիերոսի աշակերտ Պամֆիլիոսին, որ եղել է ուսու-
ցիչ Եւսեբիոս Կեսարացու: Որոգինիզմի աջակողմեան ընթացքը,
որ հիմնուած էր Որոգինէսի աստուածաբանական այն սկզբունք-
ների վերայ, որոնք հնարաւորութիւն էին տալիս Աստուածա-
յին անձնաւորութեանց միութիւնը և նրանց հաւասարութիւ-
նը հաստատել, իրեն ներկայացուցիչ ունեցաւ Գրիգոր Աբանչե-
լագործին, Որոգինէսի Կեսարիայում ունեցած ջերմեռանդ ա-
շակերտին, որը հաստատեց Որոգինէսի սկզբութիւն Կապա-
զովկիայում:

Իրենք աշակերտները և Որոգինէսի հաւատարիմ հեռանդնե-
րը, որոնք երկու ուղղութիւնների էին բաժանուած՝ ստիպուած
էին նրա աստուածաբանական շատ սկզբունքները թուլացնել:
Մինչդեռ երևան եկաւ նաև ուղղակի ձգտումն Որոգինէսի աս-
տուածաբանութիւնը սրբագրելու և այդ ամենից առաջ Աղէք-
սանդրիայում: Գիմնիսիոս Աղէքսանդրացին արդէն, որ Որոգինէսի
սկզբունքների անպայման հնազանդութիւնը ծայրահեղութեան
էր հասցրել, հակառակութեան հանդիպեց իւր եկեղեցւոյ ուղ-
ղափառ եղբայրների կողմից և ստիպուած էր նրա գործադրած
արտայայտութիւնները բացատրել եկեղեցւոյ վարդապետու-
թեան ոգով: Իսկ Գ-րգ դարի հէնց սկզբին Աղէքսանդրիայի Պետ-
րոս եպիսկոպոսը, չնայած Որոգինէսից իւր ունեցած ամբողջապէս
կախումին, այնուամենայնիւ նրա գէժ վճռապէս ստքի կանգնեց
այն մանրամասնութիւնների և յատկապէս այն սկզբունքների
պատճառով, որոնք նրա եկեղեցական գիտութեան համար գայ-
թակղութիւն էին ներկայացնում: ձշմարիտ է, Ս. Պետրոսը մեր-
ժում էր միայն Որոգինէսի աստուածաբանութեան առանձին կէ-
տերը, նրանց աղբիւրը հէլլէնական փիլիսոփայութեան մէջ ցոյց
տալով և ընդունելով զրանց տարօրինակ և օտար՝ Գրիստոսի մէջ
բարեպաշտութեամբ ապրել ցանկարողների համար և որպէս թէ
Որոգինէսի տեսութիւնների էութեանը չէր դիպչում, այնուամե-
նայնիւ թէ այստեղ և թէ Որոգինէսի մասնաւոր տեսութիւնների
հեռացման և հերքման բոլոր փորձերի մէջ, արդէն խախտում
էին նրա սիստեմի հիմքերը, որովհետև նրա մօտ մասնաւորը ան-
քակաելի կերպով կապուած էր էութեան հետ, որ արտադրու-
թիւն էր գտել զրանց մէջ, աւելի շօշափելի և դիւրամբռնելի

ընդհանուր եկեղեցական վարդապետութեան տեսակէտով, նոյն իսկ այնպիսի մարդկանց հասկացողութեան և գնահատութեան համար, որոնք Որոգինէսի Աստուածաբանական—փիլիսոփայական տեսութիւնները բարձրութեան վերայ չէին կանգնած: Անհասկած է, ի հարկէ, Որոգինէսի հետ ունեցած Ս. Պետրոսի յարաբերութեանց վերայ ուղղափառ կուսակցութեան հակափիլիսոփայական ազդեցութիւնն էր արտացոլում: Այսպիսով Որոգինէսի Աստուածաբանութիւնը Աղէքսանդրիայում համաձայնացրուեց եկեղեցական աւանդութեանը, մինևնոյն ժամանակ պահպանելով և յարդանք դէպի մեծ վարդապետի անձնաւորութիւնը:

Որոգինէսի աստուածաբանական վարդապետութիւնը Աղէքսանդրիայից դուրս աւելի քիչ հիմք ունէր մաքուր գրութեամբ պահպանուելու և այլ ևս վճռական հակառակութեան չհանդիպելու. որովհետև այնտեղ սուրիշ աստուածաբանական աւանդութիւններ շատ զօրեղ էին: Փոքր Ասիայում գոյութիւն ունէին փոքր-ասիական աստուածաբանութեան աւանդութիւնները և Ս. Իրենէոսի ազդեցութիւնը այնքան զօրեղ էր այստեղ, որ Որոգինիզմը նոյն իսկ իւր աջակողմեան ուղղութեան մէջ ընդհանուր հաստատութիւն գանել այստեղ չէր կարող: Իսկապէս, փոքր-ասիական աստուածաբանական ուղղութիւնը Ս. Իրենէոսի գործունէութեան պայմանների և եկեղեցական կեանքի մէջ նրա նշանակութեան շնորհիւ, չէր կարող լսի եկեղեցւոյ շրջանով սահմանափակուել և իրապէս արևելքում և արևմուտքում ընդարձակ կերպով տարածուեց. նա միանգամայն համեմատ էր ընդհանուր—եկեղեցւոյ հաւատի ընդհանուր հասկացողութեանը և համապատասխանում էր սովորական աստուածաբանական մտածողութեան աստիճանին և ընդհանուր ոգուն: Նրա ազդեցութիւնը արևմուտքում տարածւում էր մինչև Հռոմ, Վաղղիա և հիւսիսային Ափրիկա և արևելքում մինչև Անտիոք. այս բոլորը Որոգինէսը պէտք է հաշուի առնէր. Իրենէոսի սկզբունքները իրենից յետոյ էլ ազդեցութիւն ունէին Աղէքսանդրիայում, և Որոգինէսը ստիպւած էր իւր աստուածաբանական վարդապետութիւնը եկեղեցու սգու համեմատ ուղղագրելու: Բայց, դեռ ևս Գ.~րդ դարի սկզբին քրիստոնէական աշխարհի բոլոր մասերում կենդանի գիտական շարժումն առաջ եկաւ, որ պատրաստեց ի միջի այլոց նաև ճանապարհներ Որոգինէսի գաղափարները և աստուածաբանական ձգտումները արագ տարածման համար, և երբ, այդ դարի ընթացքում Որոգինէսը խորին և կարող ազդեցութիւն ցոյց տուեց, փոքր-ասիական աստուածաբանութիւնը չէր կարող իւր առաջուայ դրութեան մէջ մնալ և պէտք է աւելի պարզ և աւելի յարող կեր-

պով սրօշէր իւր յարաբերութիւնը դէպի դիտութիւնը: Նա չկարողացաւ պաշտպանել նաև իրեն հետևողներին Որոզինէսի ազդեցութիւնից: Այս բարդ հանգամանքների արդեցութեան առկա Փոքր Ասիայում առաջ եկաւ մի աստուածաբանական ուղղութիւն, որ չէր քաշուում և լիլիսոփայութիւնից օգտուելու, բայց մինևնոյն ժամանակ ձգտում էր հաստատուն կերպով պահպանել ստացած հաւատի ճշմարտութիւնները իրենց իրական հասկացողութեամբ: Իրենէսի և որս աշակերտ Հիպոլիտի ճանապարհով գնալով, այս տեսակի աստուածաբանները դիտութիւնը չէին ատում, բայց բարձր ճշմարտութիւնը եկեղեցական աւանդութեան սկզբունքների մէջ էին գտնում, ուստի և լիլիսոփայական գնոսիսին իրաւունք չէին վերագրում մշակելու հաւատի սկզբունքները, այլ միայն հաստատել նրանց, կապել և բացատրել: Բնական է, որ աստուածաբանութեան մէջ իրենց այստեսակ ձգտումներով նրանք Ողէքսանդրիայում հաւատի դիտութեան մշակման հակաակորդներ պէտք է հանդիսանային և պէտք է ոտքի կանգնէին նաև նրա հայր Որոզինէսի դէմ: Աստուածաբանական այս ուղղութեան ամենանշանաւոր արտայայտիչն էր Ոլիմպիացի Մեթոզիոսը, որ իրանով աստուածաբանի հետաքրքիր օրինակ էր ցոյց առլիս, որ իւր վերայ Որոզինէսի գօրեղ ազդեցութիւնն էր կրել և մինևնոյն ժամանակ խիստ հակառակ էր նրա հոգեկանութեան: Նա յենւում է փոքր-ասիական հին աւանդութիւնների վերայ, և Իրենէսի ու Հիպոլիտի աստուածաբանութիւնը նրա համար—եկեղեցական վարդապետութիւն է: Որովհետև նա խիստ կերպով հերքում է Որոզինէսի աստուածաբանութեան սկզբունքները և վճռապէս յարձակում նրա մեթոդների և ս. Գրքի այլաբանական բացատրութեան վերայ. եկեղեցական գնոսիսի նկատմամբ նա նոյն դիրքն է բռնում, ինչ որ Իրենէսը—հերետիկոսների: «Փրօն խօսքերի» դէմ նա գնում է «հաստատուն և առողջ վարդապետութիւնը», «հետաքրքիր աստուածաբանութիւն»-ը, «փաստերի աստուածաբանութիւն»-ը: Բայց ինքը հաստատապէս սլտումնասիրում էր Պլատոնին և սեպհականեց նրա մտքերը, այնպէս որ նրա հայեացքները հիմք են առնում նոյն յունական լիլիսոփայութեան էնթադրութիւնների մէջ, ինչպէս և Որոզինէսի հայեացքները: Նա նոյն իսկ քաջահատութեամբ դործ է գնում այլաբանական բացատրութիւն, որտեղ այդ իրեն յարմար է: Հետևանքն այն եղաւ, որ Մեթոզիոսը, մի կողմից Որոզինէսի դէմ մղած եռանդուն վիճաբանութեան մէջ պաշտպանում էր ընդհանուր եկեղեցուց հաւատի հանրամատոյչի հասկացողութիւնը և մերժում էր Որոզինէսի բոլոր վարդապետութիւնները, որոնք իրանց մէջ

պարունակում էին անձնուէր վարդապետութեան բացատրութիւնը, սակայն միւս կողմից, նա չհեռացաւ Որոգինէսի տեսութիւնից, և նոյն իսկ փորձեց նրա մեթոդներով հաւատի համար յաջող հետեանքի հասնել, և չնայած դրան, Ս. Մեթոդիոսի աստուածաբանութիւնը փոքր—ասիական իւր ուղղութեան զանազանող յատկանիշները չէ կորցնում, որովհետեւ նա ոչ թէ ձրգտում է Իրենէսից և Աղէքսանդրիայի աստուածաբանութիւնից փոխառածի միացման, այլ առաջինի գիտական հաստատման*:

Հակաորոգինէսեան շարժումը, որի արտայայտիչ հանդիսացաւ Ս. Մեթոդիոս Ոլիմպիացին, Իւրգ դարի սկզբին այնպէս մեծացաւ, որ Որոգինէսի հետեող և խորապէս յարգողներ Պամփիլիոս և Եւսեբիոս Կեսարացին, ստիպուած էին զանազան մեղադրանքներից նրան պաշտպանելու համար ջատագովութիւն գրել: Այս ջատագովութիւնից երևում է որ Որոգինէսին շատերը մեղադրում էին շարափառութեան մէջ, որոնք նրա վարդապետութեան հետ ծանօթ էին միայն լսելով. պակաս չէին և այնպիսիք, որոնք պատրաստ էին հրճուելու նրա մի քանի տեսութիւններով, քանի դեռ դրանց հեղինակի անունը չգիտէին: Սակայն բաւական էր, որ նրանք իմանային թէ դրանք Որոգինէսի հայեացքներն են, իսկոյն այդ հայեացքները համարում էին հերետիկոսական**:

Հաւանականօրէն մարդիկ կային, որոնց համար այն կարծիքը թէ Որոգինէսը հերետիկոս է—այնուամենայնիւ նահատիած այդ բնդհանուր հիմունք չէր և նոյն իսկ աշակերտների և Որոգինէսի հայեացքներէ կողմնակիցների շրջանից դուրս նրա հեղինակութիւնը, ինչպէս եկեղեցւոյ ուսուցչի, շատ բարձր էր. այդ մասին վկայում է անանուն երկախօսութիւնը Աստուծոյ արդար հաւատի մասին* (Περὶ τῆς εἰς Θεὸν ὁρθῆς πίστεως)***, որի ծագումը համարում են 300—310 թուականներին: Սրա հեղինակին պէտք է փնտրել Ս. Մեթոդիոսին մօտ շրջաններում. նա վերջինիս երկերից օգտուել է: Նա Որոգինէսի աշակերտը չէ, որովհետեւ վերջինիս տեսութիւններին համակարծիք չէ. նրա աշխատութիւնը Աղէքսանդրիայի աստուածաբանութեան ազդեցութիւնը չէ կրում, աւելի շատ նրա մէջ նկատուում է—Իրենէսի և Հիպոլիտի ազդեցութիւնը. բայց

* Prof. Nath. Bonwetsch, Die Theologie des Methodius von Olympus. Berlin 1903, S. 171.

** MPG. 17, 546.

*** W. H. von de Sande Bakhuysen, der Dialog des Adamantius Περὶ τῆς εἰς Θεὸν ὁρθῆς πίστεως. Leipzig. 1901 (Griechisch—christ. Schriftsteller, Bd. IV).

միևնոյն ժամանակ նա Որոգինէսի հետ վիճաբանութեան մէջ չէ մտնում, այլ ցուցադրում է նրան (Ատամանտիայի միջոցով) հերետիկոսների հետ ունեցած վէճերի մէջ անդամ եկեղեցւոյ տեսակէտի արտայայտիչ։ Հեղինակը բացում է բարձր ընդդիմախօսական և Աստուածաբանական Գպրոց։ Նրա երկերը յայտնի են իրենց հակըճութեամբ, արտայայտութեանց ճշտութեամբ և աստուածաբանական հարցերի լուծման ժամանակ մեծ մասամբ գործ է գնում իրլիսոփայական տարրեր։ Համեմատելով Ա. Մեֆոդիոսի հետ նրա մէջ կարելի է Փոքր Ասիայի աստուածաբանութեան մի ուրիշ նրբութեան ներկայացուցչի տեսնել, այսինքն — խաղաղական, որ օտար է թշնամութիւնից դէպի Որոգինէսը։

Որոգինէսի ազդեցութիւնը Կեսարիայից տարածուեց նաև հարևան Ասորիքի՝ Անտիոքի և Նդետիայի վերայ, սակայն այստեղ ևլ զօրեղ էին տեղական աւանդութիւնները, որոնք ոչ թէ միայն մաքուր որոգինիզմին հաստատուելուն հնարաւորութիւն չտուին, այլ և աւաջ բերին այնպիսի հակադրութիւն, որը աստուածաբանական զարգացման մէջ նոր տարր է մըտցնում և ոչ միայն նոր ուղղութիւնն է ցոյց տալիս, այլ և հէնց աստուածաբանական գիտութեան նոր հասկացողութիւն սրանով մենք հասկանում ենք Գրք և Գրք զարեբում Անտիոքի դպրոցի սրոշակի հանդէս գալը, Անտիոքի աւագ երեց Լուկիանոսի անուան հետ կապուած, որը յաջորդ ժամանակի աստուածաբանական գիտութեան բնաւորութեան և ուղղութեան վերայ նշանաւոր ազդեցութիւն է թողել թէ իբրև մեկնաբան և թէ իբրև բնազանցադէտ։ Լուկիանոսը գտնւում էր Որոգինէսի ազդեցութեան տակ ոչ միայն իւր ս. Գրոց քննական գործունէութեան մէջ այլ և դաւանաբանական հայեցակէտերում։ այնուամենայնիւ մեկնաբանութեան մէջ նրա հասկացած ուղղութիւնը հետզհետէ ծաւալուեց Որոգինէսի դաւաբանական մեթոդին կատարելապէս հակառակ և Անտիոքի դպրոցի աստուածաբանութեան վերայ առանձին կիսք զրեց։ Աղէքսանդրիայի դպրոցի նման, Անտիոքի դպրոցն էլ ձգտում էր հաւատոյ ճշմարտութեան ներքին կապը, գիտութեան միջոցով բացարձակ վարդապետութեան բացատրութիւնը աւելի խորը հասկանալու։ Սակայն այդ դպրոցի ներկայացուցիչներն ամբողջ աստուածաբանութիւնը բոլորովին այլ բնաւորութիւն էր կրում, և նպատակին հասնելու միջոցներն էլ այլ էին։ Թէ Անտիոքի և թէ Աղէքսանդրիայի աստուածաբանները կանգնած էին ս. Գրքի և եկեղեցւոյ հաւատի հողի վերայ, նրանց տարբերութեան սիղբնակէտը միայն ս. Գրքի տարբեր հասկանալու

մէջ էր, իսկ առանձնայատկութիւնն էր Անտիոքացիներն պատմամա—քերականական մեթոդը Աղէքսանդրիացիներն այլաբանական մեթոդի հակառակ: Սակայն իւր էութեամբ այս հակադրութիւնը ունէր միւսնոյն հիմքերը, ինչպիսիքներն վերայ հաստատուեց յունական փիլիսոփայութիւնը իւր ծաղկման շրջանում Արիստոտելի և Պլատոնի մէջ եղած հակադրութեանց հակառակ: մի կողմից ոգևորուած, միտաբանական այլաբանական իդէալականութիւն, իսկ միւս կողմից—զգաստ, բանական, պատմական ըէպիկանութիւն: Ուստի և, այն ժամանակ, երբ Աղէքսանդրիայի աստուածաբանները գտնուում են Պլատոնի և նորպղատոնական փիլիսոփայութեան ազդեցութեան տակ, Անտիոքի դպրոցի մէջ հեաղհեաէ գերակշիռ տեղ է ստանում Արիստոտելի փիլիսոփայութիւնը և հաստատուում է զգաստ, բանական ուղղութիւն, լոգիքական մտածմունք, յայանուած վարդապետութեան իրական քննադատութիւն: Համաձայն սրան Անտիոքի աստուածաբանները դաւանաբանութեան մէջ ստուերագծում են համապատասխանը բնութեան համապատասխան, իսկ սօտերիօլօգիայի և շնորհաբաշխման վարդապետութեան մէջ վճռապէս առաջ էին տանում մարդկային ազատութեան և ինքնուրոյնութեան բոպէն: Այսպէս ուրեմն քրիստոնէական աստուածաբանական գիտութեան յայանուելու շրջանում, մարդկային հոգևոր կեանքի ընդհանուր օրէնքների համեմատ, նրա մէջ իդէալական—այլաբանական ուղղութեան հաստատուելուց յետոյ առաջ է գալիս իբրև յետադիմութիւն բնական—պատմականը*: Ինչպէս որ Աղէքսանդրիայի դպրոցի ուղղութիւնը ուղիղ կախումն ունի Աղէքսանդրիայի կեանքի հոգևոր բնաւորութիւնից և նրա մէջ տիրապետող կրօնա—փիլիսոփայական հոսանքներից, այդպէս էլ Անտիոքի ուղղութիւնը իւր հիմքն ունի եկեղեցւոյ ճշտումների և ներքին կեանքի մէջ, ասորական հասարակութեան տեղական և պատմական յարաբերութեան և ժողովրդի բնաւորութեան մէջ, ասորական հրէաների և գնոստիկների կռուի մէջ, որոնք պատմա—քրիստոնէական մեկնաբանութեան մեթոդը գործ էին դնում անտագոնիզմի մէջ երևան եկած աղէքսանդրիացիների քմահաճ այլաբանութեան հեաւանքների դէմ: Անտիոքի դպրոցը իւր ծաղկման դագաթնակէտին հասաւ յաջորդ շրջանում, և Աղէքսանդրիայի ու

* Prof. Alb. Ehrhard, Die altchristliche Literatur und ihre Erforschung von 1884 - 1900. I. Abth. Freiburg in Br. 1900. S. 625—626.

Անտիոքի ուղղութիւնները մեջի կուրք դառնում է հող յաջորդ
դարերի դաւանաբանական մեծ վէճերի համար:

Սուքա էին եկեղեցւոյ աստուածաբանական գիտութեան
հոսանքները, որոնք զարգացել կամ նկատուել էին Գ-րդ դարի
սկզբում: Թէև նրա շարժման մէջ, աչքի առաջ ունենալով բո-
լանդակութիւնը, չկայ կանոնաւորութիւն և վճռականութիւն,
այնուամենայնիւ մեծ հետևանքների հասան. եկեղեցական վար-
դապետութեան բոլոր էական հարցերը դրուեցան, նրանց լուծ-
ման համար հող պատրաստուեցաւ, հաստատուած էին համարեա
բոլոր հասկացողութիւնները, որոնցով դործում էր աստուա-
ծաբանութիւնը Գ-րդ և Ե-րդ դարերում, — ճշմարիտ է, նրանց
պակասում էր կատարեալ որոշութիւնը — ի նկատի էին առած
ո. Գրքի այն կէտերը, որոնք առանձնապէս գործ էին դրուած
Գ. և Ե. դարերի կոիւններն: Գիտական աշխատանքների հետե-
ւանքները ընդունել էր եկեղեցին, շատ հանգանակների մէջ
ընդունուել էր գիտական աստուածաբանութեան մտքով ընդլայ-
նումներ: Գրիգոր Նիւսայցին հաղորդում է, որ Գրիգոր Աբանչե-
լագործի հանգանակն էր Կեսարիայի նորահաւատների կանոնների
հիմքը մինչև իւր ժամանակը. իսկ այս խորհրդանշանը կամ
հանգանակը իւր մէջ արտացոլում էր Որոգինէսի աստուածա-
բանութեան խիստ ազդեցութիւնը Գրիգոր Աբանչելագործի հաս-
կացողութեան և նրա տերմինոլոգիայի վերայ: Նիկիոյ ժողովի
գործունէութիւնից երեւում է, որ միւս եկեղեցիներն էլ այն-
ժամանակ հանգանակ ունէն, որոնք բոլանդակում էին Որոգի-
նէսի ո. Գրոց աստուածաբանական ձևերը. ամենայն վստահու-
թեամբ այս կարելի է ասել Նրուսաղէմի և Անտիոքի եկեղեցի-
ները համար, գուցէ, նաև Կեսարիայի եկեղեցւոյ համար:

Արտակ վարդապետ.

(շարունակելի)